ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

---դեկտեմբերի 2021 թվականի № ----
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 16-Ի №269Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2014 թվականի հուլիսի 16-ի №269Ա որոշմամբ «ՇՈՒՄԵՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել է «Ստեփանավան-2» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0551 լիցենզիան (այսուհետ՝ Լիցենզիա)՝ մինչև 2030 թվականի դեկտեմբերի 29-ը գործողության ժամկետով,

բ) Հանձնաժողովի 2018 թվականի հոկտեմբերի 24-ի №398Ա որոշմամբ Լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը երկարաձգվել է 15 ամսով՝ մինչև 2020 թվականի հունվարի 29-ը,

գ) Ընկերությունը մինչև 2020 թվականի հունվարի 29-ը Լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածի երկարաձգման հայտ չի ներկայացրել Հանձնաժողով և չի դիմել Լիցենզիայի պայմաններում փոփոխություններ կատարելու համար,

դ) Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, 2020 թվականի հունվարի 30-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ «Էներգետիկայի մասին» օրենքի 30.1 հոդվածի 2-րդ մասի հիմքով՝ Լիցենզիայի գործողությունը դադարեցնելու

հարցի քննարկման նպատակով, որի մասին Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2020 թվականի հունվարի 30-ի №ՍՇ/34.1-Մ2-5/278-20 գրությամբ,

ե) վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2020 թվականի փետրվարի 4-ի գրությամբ հայտնել է, որ 2018 թվականի հոկտեմբերի 2-ին դիմել է Հանձնաժողով՝ Լիցենզիայով սահմանված կառուցման ժամանակահատվածի երկարաձգման խնդրանքով, սակայն, Հանձնաժողովը չի բավարարել հայցվող ժամկետը, և կայացված որոշումը բողոքարկվել է Հայաստանի Հանրապետության վարչական, այնուհետև Հայաստանի Հանրապետության վերաքննիչ վարչական դատարան: Հաշվի առնելով, որ հայցված 24 ամսյա կառուցապատման ժամկետի տրամադրման հարցը գտնվել է բողոքարկման փուլում, հետևաբար «Ստեփանավան-2» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածի ավարտը չի կարող համարվել 2020 թվականի հունվարի 29-ը: Ելնելով նշվածից՝ Ընկերությունն առաջարկել է վիճարկվող հարցին անդրադառնալ Հայաստանի Հանրապետության վերաքննիչ վարչական դատարանի կողմից ընդունված ակտն ուժի մեջ մտնելուց հետո,

զ) Հանձնաժողովի 2020 թվականի փետրվարի 26-ի №37Ա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի հիմքով կասեցվել է Ընկերության նկատմամբ 2019 թվականի հունվարի 30-ից հարուցված վարչական վարույթը՝ մինչև վարչական դատավարության կարգով քննվող №ՎԴ/0341/05/19 գործով վերջնական դատական ակտի կայացումը, ինչի մասին Ընկերությունը ծանուցվել է 2020 թվականի փետրվարի 26-ի №ԱՍ/34.1-Մ2-5/693-20 գրությամբ,

է) 2021 թվականի դեկտեմբերի 9-ին Հանձնաժողով է մուտքագրվել №ՎԴ/0341/05/19 գործով Դատարանի 2019 թվականի դեկտեմբերի 3-ին կայացված վճիռը՝ օրինական ուժի մեջ մտնելու վերաբերյալ նշումով: Նշված վճռով մերժվել է Ընկերության հայցն ընդդեմ Հանձնաժողովի՝ Հանձնաժողովի 2014 թվականի հուլիսի 16-ի №269Ա որոշմամբ Ընկերությանը տրված Լիցենզիայով սահմանված՝ «Ստեփանավան-2» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը 24 ամսով երկարաձգելու մասին բարենպաստ վարչական ակտ ընդունելուն Հանձնաժողովին պարտավորեցնելու պահանջի մասին,

ը) «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասի հիման վրա 2021 թվականի դեկտեմբերի 13-ից Ընկերության նկատմամբ 2020 թվականի հունվարի 30-ին հարուցված վարչական վարույթը վերսկսվել

է և նույն օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով երկարաձգվել է 10 օրով՝ Ընկերության կողմից գործի վերաբերյալ առկա նոր հանգամանքների և տեղեկությունների ներկայացման համար, ինչի մասին Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 13-ի №ԳԲ/34.1-Մ4-1/4277-2021 գրությամբ, սակայն սահմանված ժամկետում որևէ փաստարկ չի ներկայացրել,

թ) Ընկերության ներկայացրած՝ «Յունիբանկ» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2017 թվականի հունիսի 29-ի №1913 գրությամբ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին տրամադրված բանկային երաշխիքի (երկարաձգված 2018 թվականի դեկտեմբերի 10-ի №2111 գրությամբ) գործողության ժամկետը ավարտվել է 2020 թվականի մարտի 14-ին,

ժ) «Էներգետիկայի մասին» օրենքի 30.1 հոդվածի 2-րդ մասի «ա» և «բ» կետերի համաձայն՝ լիցենզավորված անձի գործունեության լիցենզիան կարող է դադարեցվել նաև այն դեպքերում, երբ արտադրության լիցենզիա ունեցող անձը լիցենզիայով սահմանված կառուցման ժամանակահատվածում չի ավարտել կայանի կառուցման աշխատանքները, Հանձնաժողովի սահմանած կարգով չի դիմել լիցենզիայով սահմանված կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու հայտով կամ Հանձնաժողովի սահմանած կարգով չի դիմել լիցենզիայի պայմաններում փոփոխություններ կատարելու համար,

ժա) Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 6-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշում է ընդունում երաշխիքով սահմանված գումարն ամբողջությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու մասին, եթե Հանձնաժողովը որոշում է ընդունել արտադրության լիցենզիայի գործողությունը դադարեցնելու մասին,
- 9-րդ կետի համաձայն՝ Կարգի 6-րդ կամ 7-րդ կետերով նախատեսված որոշման ընդունման դեպքում, եթե լիցենզավորված անձի կողմից նախկինում Հանձնաժողով երաշխիք չի ներկայացվել, ներկայացված երաշխիքի գործողության ժամկետը լրացել է կամ դրանով ամրագրված (դրա շրջանակում առկա) գումարի չափը չի բավարարում նույն որոշման պահանջի ամբողջական ապահովման համար, Կարգի 6-րդ և 7-րդ կետերով նախատեսված գումարի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու պարտավորությունն ամբողջությամբ կամ չբավարարող մասով կրում է

լիցենզավորված անձը,

ժբ) վարչական վարույթի արդյունքում փաստվել է, որ Լիցենզիայով ամրագրված «Ստեփանավան-2» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը ավարտվել է 2020 թվականի հունվարի 29-ին, և Ընկերությունը չի ավարտել կայանի կառուցման աշխատանքները, չի դիմել Լիցենզիայի պայմաններում փոփոխություններ կատարելու կամ Լիցենզիայով սահմանված կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, ինչը «Էներգետիկայի մասին» օրենքի 30.1 հոդվածի 2-րդ մասի «ա» և «բ» կետերի համաձայն լիցենզիայի դադարեցման հիմք է: Միաժամանակ հաշվի առնելով, որ Ընկերության կողմից Կարգի 8-րդ կետին համապատասխան ներկայացված երաշխիքի գործողության ժամկետը լրացել է 2020 թվականի մարտի 14-ին, Կարգի 6-րդ կետով նախատեսված գումարի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցման պարտավորությունը կրում է Ընկերությունը, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 30.1 հոդվածի 2-րդ մասի «ա» և «բ» կետերը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետը և 9-րդ կետը՝ Հանձնաժողովը որոշում է.

1. Ուժը կորցրած ճանաչել Հանձնաժողովի 2014 թվականի հուլիսի 16-ի ««ՇՈՒՄԵՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Ստեփանավան-2» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №269Ա որոշումը:
2. Պարտավորեցնել Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում 900005028130 հաշվեհամարով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցել 1,362,500 (մեկ միլիոն երեք հարյուր վաթսուներկու հազար) դրամ գումար:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ այն ստանալու պահից տասնհինգօրյա ժամկետում՝ Դատարան և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը, բացառությամբ՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով նախատեսված դեպքի:

4. Սույն որոշումը սահմանված ժամկետում կամովին չկատարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
— դեկտեմբերի 2021թ.